№ 50 ՇԱԲԱԹ, 8 ՄԱՐՏԻ ԵՐԿՐՈՐԴ 1919 ՏԱՐԻ ՇԱԲԱԹ, 8 ՄԱՐՏԻ №50

ეროვნული ბიბლიოთეკა

# ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ ՕՐԱԹԵՐԹ

Օրգան Հայ Ժողովրդական Կուսակցութեան Կենտրոնական Կոմիտէի

Խմբագրութիւնը բաց է ամեն օր առ. ժամը 9-ից մինչև 3-ը։ Յօդուածները պէտք է գրուած լինեն պարզ և մի երեսի վրայ։ Յօդուածները կարող են ենթարկուել փոփոխման և կրճատման։ Ընդունուած յօդուածները, որոնց տակ չէ գրուած վարձատրութեան պահանջ՝ կը համարուեն ձրի։

ԳԻՆՆ Է 70 ԿՈՊԷԿ

Յայտարարութիւններն ընդունւում են ամեն լեզուով առաջին երեսում 75 կոպ., իսկ վերջին երեսում՝ 50 կոպ. Բժիշկների և աշխատանք փնտրողների համար որոշ զեղչ։ Մահազդի համար 15 ռուբլի։ Յայտարարութիւնները նոյն օրուայ թերթի համար ընդունւում են մինչև ժամը 2-ը։

ՇԱՐՈՒՆԱԿՒՈՒՄ Է ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹ.

1919 թ.

## ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ

ՕՐԱԹԵՐԹԻ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆՆ Է.

| | |
|---|---|
| 1 ամիսը | 10 ռուբ. |
| 3 » | 25 » |
| Հատավաճառ | 70 կոպ։ |

Հասցէն՝ Тифлисъ, Головинскій пр. № 41.

Գրասենեակը բաց է ամեն օր առաւ. ժամը 9-ից մինչև 3-ը, բացի կիրակի և տօն օրերից։ Телефонъ 16—90.

Վշտահար Աստղիկ Միքայէլեան և Միքայէլ Աւետիսեան Ղալթաղեանցները իրենց զաւակներով յայտնում են իրենց ազգականներին և ծանօթներին՝ առաջինի տալ, երկրորդի անմոռանալի քրոջ՝ ՆՈՒԽԵՑԻ

**Ծաղիկ Աւետիսեան Սարգսեանի**

մահը, որ տեղի ունեցաւ մարտի 6-ի գիշերը կարճատև բայց ծանր հիւանդութիւնից յետոյ։ Ամբիծքը չաբաթ, երեկ. ժամը 6-ին։ Թաղարկաւորութիւնը կիրակի, առաւ. ժամը 10-ին, իր բնակարանից (Սերեբրեաննայա փ. № 6), դէպի ս. Էջմիածնեցոց եկեղեցին։ Թաղումը Խոջիվանքի գերեզմանատանը։ 2—1

Գրիգոր ա. ք. Մանդակունին և իր դուստր Վարսենիկ Արամեանցը յայտնում են իրենց բարեկամներին՝ որ ամսիս 9-ին, կիրակի օրը կատարելու են առաջինը իր սիրելի փեսայի. երկրորդը իր պաշտելի ամուսնու՝

**Իշխան Աբրահամեան Արամեանցի**

մահուան քառասունքը Ջորաբաշի ս Գէորգ եկեղեցումը. ս. պատարագը սկսուելու է առաւ. ժամը 10-ին և այնտեղից գնալու են գերեզմանատունը։ 1—1

Արուսեակ, Մկրտիչ, Արմենուհի, Հայկուհի և Արմենակ Տէր-Կարապետեանները խորին վշտով յայտնում են ազգականներին, բարեկամներին և ծանօթներին, առաջինն իր անմոռանալի եղբօր, երկրորդն իր անհրոդի, վերջիններն իրենց սիրելի մօրեղբայր՝

**Արամ Մարտիրոսեան Ռուխկեանցի**

վաղահաս մահը, որ տեղի ունեցաւ ամսիս 6-ին։ Ամբիծքը կը կատարուի շաբաթ, երեկ. ժամը 5-ին (Горійская ул. № 10, Дидубе), իսկ յուղարկաւորութիւնը կիրակի, ամսիս 9-ին, առաւօտեան ժամը 10-ին, իր բնակարանից դէպի Թանդոյեան ս. Աստուածածին եկեղեցին և այդտեղից Խոջիվանքի գերեզմանատունը։ 1—1

Կիրակի, մարտի 9-ին, ցերեկ. ժամը 12-ին, Կ. Հ. Բ. Ընկ. ընթերցարանի դահլիճում կը կայանայ

ՀԱՅ ՆԿԱՐԻՉՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ԱՆԴԱՄՆԵՐԻ

## ՏԱՐԵԿԱՆ ԸՆԴՀԱՆՈՒՐ ԺՈՂՈՎԻ

շարունակութիւնը

Քննելու համար Հայաստանի Վերաշինութեան Ընկերութեան կանոնադրութիւնը և ընտրելու ժամանակաւոր գործադիր մարմին։ 1—1

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱ

Կիրակի, ամսիս 9-ին, երեկոյեան ժամը 4 և կէսին, կը կայանայ հերթական դասախօսութիւն։ Խօսելու է

**Տիգրան Հախումեան**

Հրաւիրուած են Աշակերտական և Ուսանողական ֆրակցիաների բոլոր անդամները և համակրողները։ Դասախօսութիւնը կը կայանայ Բարեգործական Ընկերութեան ընթերցարանում (Արաս-Արաթեան հրապարակ)։ 2—1

ՀԱՅ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԿՈՒՍԱԿՑՈՒԹԻՒՆ

ԱՇԱԿԵՐՏԱԿԱՆ ՖՐԱԿՑԻԱ

◆◆◆◆ Երեքշաբթի, մարտի 11-ին ◆◆◆◆

ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ ՀԱՄԵՐԳԱՅԻՆ ԴԱՀԼԻՃՈՒՄ

## ՀԱՄԵՐԳ-ԲԱԼ

Սկիզբը երեկ. ժամը 8-ին

Մանրամասնութիւնները աֆիշաներում ◆ Տոմսակները վաղօրօք կարելի է ստանալ Ն. Տատուրեանի խանութում (Դվորցով. փ.)։ 3—1

## „ԳՈՐԾԱԶՈՒՐԿՆԵՐԻ ՕՐ“

1919 թուի մարտի 7, 8, 9-ին կազմակերպւում է՝

Մարտի 8-ին ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԵԱՆ բոլոր դահլիճներում կը լինի

## ՇՔԵՂ ՀԱՄԵՐԳ-ԿԱԲԱՐԷ

Երեկ. ժամը 10-ից մինչև գիշերուայ ժամը 3-ը առանց ընդմիջումների բեմի վրայ և հասարակութեան մէջ։

Ծրագիրը ճոխ է՝

ԵՐԳ, ՆՈՒԱԳ, ՊԱՐԵՐ, ՄԵԼՈԴՐԱՄԱ

և մի շարք նոր համարներ։

Առաջին անգամ Թիֆլիսում՝ Ս. ԳՈՐՈԴԵՑԿՈՒ

„ԵՐԵՔ ԻՏԱԼՈՒՀԻՆԵՐ“

Ս. ԿՕՕՐՈՆԻ, Բ. ՊՐՈԶՈՐՈՎՍԿԻԻ, ԵՒ. ԼՎՈՎԻ

ՆՈՐ ԵՐԳԵՐԸ։

Սիւրպրիզներ հասարակութեան համար, յայտնի արտիստների մասնակցութեամբ։ Էքսպրոմտներ։ ՆՈՐ ՏՐԻԿ։ Մասնակցում են պետական թատրոնի օպերայի և բալէտի, դրամայի, «Արգոնաւտների մակոյկի» դերասանները։ Դաշնամուրի վրայ կը նուագեն՝ Բ. Պրոզորովսկի, Ս. Կոռոնի։ Գրական-գեղարուեստական բաժինը կը ղեկավարեն՝ Ս. Գորոդեցկին և Վ. Աֆանասիևը։ Կոնֆերանսիէ՝ Եւգ. Լվով։ Երեկոյթի կառավարիչն՝ Ա. Բալթարաձէ։

Մուտքի տոմսակներ չկան։ ◆ Սեղանները կը վաճառուեն ԿԱԲԱՐԷԻ օրը դահլիճի մուտքի մօտ ◆ Մուտքը թատրոնի դռնից։

Մարտի 9-ին

„ԱՐԳՈՆԱՒՏՆԵՐԻ ՄԱԿՈՅԿՈՒՄ“

Ցատուկ հոնկոյ մինչև ժամը 3-ը։ 3—2

ԲԺՇԿԱՊԵՏ

**Գ. ՄԵՀՐԱԲԵԱՆ**

Նախկին ասիստենտ Բեռլինի եւ Մոսկուայի համալսարանների կլինիկաների։ Մասնագէտ ներքին հիւանդութիւնների—թոքախտի և սրտի. ընդունելութիւնը՝ իր բնակարանում և լոյսի ու էլեկտրաբուժական կաբինետում։ Հետազօտութիւնը և բժշկութիւնը X ճառագայթներով։ Ամեն օր, 9—1 և 5—8 ժամը երեկ. Բեհբուտովսկայա փ., № 23։ Հեռ. 7—92։ 100—63

ԲԺՇԿԱՊԵՏ

**Յ. ՄԵԼԻՔ-ՆՈՒԲԱՐԵԱՆ**

(Նախկին Դավոս սանատորիայի ասիստենտ)։

Ներքին և երեխայոց հիւանդութիւնների մասնագէտ, թոքերի և սրտի հիւանդ.։ Ընդունելութիւնը ամեն օր երեկոյեան ժամը 5—7-ը։ Սոլոլակ, Ռախիշեսկայա 3, հեռ. 16—69։ —. օ.) 100—52

ԲԺԻՇԿ

**ԳՐ. Յ. ԳԱԼՈՒՍՏԵԱՆ**

Նախկին ասիստենտ Ժընևի համալսարանի կլինիկաների և պրոֆես. Oltramare-ի վեներական հիւանդութիւնների մասնագիտական բուժարանի։

ՆԵՐՔԻՆ, և ԿԱՆԱՆՑ հիւանդութիւն. մասնագէտ ՎԵՆԵՐԱԿԱՆ (ՍԻՖԻԼԻՍ, ներարկումն «606»-ի և «914»-ի), ՄԻԶԱՍԵՌԱԿԱՆ (ՀԻՆ և ՆՈՐ ՏՐԻՊԵՐ և նրա կոմպլիկացիաները) և ՄԱՇԿԻ ցաւերի։

Էլեկտրաբուժական կաբինետ։

Ընդունելութիւնն ամեն օր, առաւ. ժ. 10-ից 1-ը, երեկ. 4-ից 6-ը։ Կիրակի օրերը միմիայն ժ. 12-ից 1-ը։ Կիրոչնայա, № 11։ 100—53

## ԿԱՐԵՒՈՐ ԼՈՒՐԵՐ

Վիլսոնը գալիս է Եւրոպա։

Գործադուլական շարժում Բեռլինում։

Լուրեր Թիւրքիայից։

Վիլսոնի ճառը Նիւ-Եօրկում։

Մինիստրական ճգնաժամ Թիւրքիայում։

## ՄԻ՞ԹԷ ՀԻՄԱ ԷԼ ԺԱՄԱՆԱԿԸ ՉԷ

Խօսքը Խաչատուր Աբովեանի արձանի մասին է։

Մօտ երեսուն տարի է անցել այն օրից, երբ Աբովեանին արձան կանգնեցնելու միտքն առաջին անգամ յղացաւ Սպանդար Սպանդարեանը և իր «Նոր-Դար» լրագրում այդ նպատակի համար բաց արեց համազգային հանգանակութիւն։ Մեծ ոգեւորութիւն առաջ բերեց «Վէրք Հայաստանի» անմահ հեղինակի յիշատակն յաւերժացնելու այդ սիրուն առաջարկն այն ժամանակ և գրեթէ աշխարհի ամեն կողմերից սկսեցին գումարներ ուղարկել։ Ինչպէս Թաղնուեց այդ միանգամայն գովելի ձեռնարկութեան կիրառումը, ուր մնացին այդ գումարները—մենք այդ չենք յիշում, դա «հին պատմութիւն» է. բայց անցաւ 10—15 տարի և ահա նոյն առաջարկով հանդէս եկաւ Բագուի Հայոց Կուլտուրական Միութիւնը։ Ով ճանաչում էր այդ ընկերութեան գործունեայ և ձեռներէց նախագահին, հանգուցեալ Կոնստանդին Խատիսեանին, նա միանգամայն հաւատացած էր՝ որ Աբովեանի արձանի գործը եթէ Սպանդարեանի օրով յաջողութիւն չգտաւ, այս անգամ արդէն անպայման գլուխ կը գայ։ Եւ յիրաւի, բաւական խոշոր գումար հաւաքուեց, հայ արուեստագէտ-արձանագործների մէջ կոնկուրս յայտարարուեց, մեր լրագիրները և հանդէսները բաւական զբաղուեցին այդ խնդրով, և արձանի գործը յանձնուեց Փարիզում բնակուող արուեստագէտ տնդ. Տէր-Մարուքեանին։

Անցան դարձեալ մի շարք տարիներ. Տէր-Մարուքեանը վաղուց պատրաստել էր իրեն յանձնուած գործը, ձուլել էր տուել, և, ով խայտառակութիւն հայոց ազգի, Կուլտուրականից փող չստանալու պատճառով ձուլարանում գրաւ էր թողել մեր սիրելի Աբովեանի արձանը։ Դարձեալ լրագիրներում յօդուածներ, բողոքներ երեւացին. յիշում ենք իր Տէր-Մարուքեանի պերսական նամակը Կուլտուրականի վարիչներին, յիշում ենք Շիրվանզադէի ցասումալից նամակը։ Կուլտուրականը ինչ-որ մի բանով փորձեց արդարանալ և... փաստն այն է, որ Աբովեանի արձանը երկար ժամանակ Փարիզի մի ձուլարանում ընկած մնաց, արձանագործ Տէր Մարուքեանը հիւանդացաւ և ընկաւ տնտեսական ճգնաժամի մէջ, իսկ Երեւանում արձանի համար որոշուած տեղը վերածուեց բոստանի։ Այսպէս ենք գնահատում մենք մեր առաջաւոր գրողների յիշատակը, այսպէս ենք սիրում մենք գեղարուեստ. Ով կարող է կասկածել այսուհետեւ, որ մենք կուլտուրական ենք մեր Կուլտուրական ընկերութեան հետ միասին։

Դարձեալ մի քանի տարի։

Երեւանում չկայ ոչ նահանգապետ Տիզենհաուզենի մռայլ դէմքը, ոչ Թիֆլիսում կան այլեւս Գոլիցինի և Վորոնցով-Դաշկովի ուրուականները։ Ազատ Վրաստանը հանգանակութիւն է բաց արել իր մեծ բանաստեղծի՝ Ռուսթավելիի արձանը կանգնեցնելու Երեւանեան հրապարակում, իսկ Ազատ Հայաստանը դեռ չի մտածում գոնէ Աբովեանի պատրաստի արձանը բերել տալու և դնելու իր տեղը։

Միթէ հիմա էլ ժամանակը չէ։

Լուսաւորութեան պ. մինիստրը անձամբ լաւ ճանաչում է արձանագործ Տէր Մարուքեանին, լաւ գիտէ և արձանի դժբախտ պատմութիւնը. չէ՞ր կարելի արդեօք ձեռք քաշել Կուլտուրական Միութիւնից և կառավարութեան միջոցներից հոգալով մնացորդ ծախքերը բերել տալ արձանը, քանի դեռ Հայաստանի պատուիրակութիւնը գտնւում է Փարիզում։

Միթէ հիմա էլ ժամանակը չէ։ Մենք կարծում ենք որ ամենայարմար ժամանակն է, և յոյս ունենք կատարելապէս այդ գործի վերջնական ելքին։

Պէտք է վերջ տալ ասիական թամբալութեան։

Գ. Լեւոնեան

## ՄԱՄՈՒԼ

«Բարբառ» լրագիրը խօսելով Թիֆլիսի տնտեսական դրութեան մասին, բնորոշում է այդ դրութիւնը որպէս «կատաստրոֆիկ՝ բառիս բուն և սպառնալից նշանակութեամբ»։

Այդպիսի կատաստրոֆիկ դրութեան պատճառը լրագիրը համարում է այն, որ շնորհիւ ցարիզմից գործադրուած դարեւոր խնամատարութեան, ժողովրդի լայն խաւերը սովորել են վերաբերուել պետական և հասարակական հարցերին իբրեւ մի ուրիշ կողմնակի բանի։

Բանակռուելով «Բարբառ»-ի հետ «Գրուզիան» գրում է.

«Այդպէ՞ս է արդեօք իսկապէս գործը և արդարեւ ֆինանսական դրութեան քայքայման պատճառը գտնւում է արդեօք քաղաքի ազգաբնակութեան ժողովրդական մասսաների գիտակցութեան բացակայութեան մէջ։ Արդեօք ուրիշ պատճառ չկա՞յ, որպիսին մեզ տանում է դէպի ֆինանսական խորտակումն։ Եւ արդեօք մենք կանգնած չենք այդ վտանգի առաջ թէ ժողովրդական և թէ պետական տնտեսութեան շրջանում, ուր վտանգը մթագնում է այն հանգամանքներով, որ պետութիւնն անհրաժեշտ միջոցներ է քաղում միմիայն տպագրական մամուլի անընդհատ և արագ աշխատանքներից։ Ֆինանսական խորտակման վտանգի պատճառը կայանում է ֆինանսական սխալ քաղաքականութեան մէջ կամ աւելի ճիշտ ասած՝ մեր քաղաքի կառավարիչների և մեր պետական կեանքի ղեկավարների ֆինանսական մի որեւէ ծրագիր չունենալու պատճառով»։

«Գրուզիան» գտնում է որ՝

«Քաղաքային կեանքի վարիչների ճշմարիտ ֆինանսական քաղաքականութիւնը իր ժամանակին հարկաւոր էր գծել. այդ հանգամանքը քաղաքի արուած ծախսերի կրճատման մէջ է։ Եւ եթէ մի կողմից ճիշտ է, որ պետական և հասարակական տնտեսութեան ծախսերը պէտք է համա-

ეროვნული ბიბლიოთეკა

**ԽՄԲԱԳՐԱԿԱՆ** Թիֆլիս, 8 մարտի

# ՀԱՅԵՐԸ ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՐԼԱՄԵՆՏՈՒՄ

—oo—

Ինչպէս հաղորդում են Բագուի լրագիրները, Ադրբէջանի հայերը և մասնաւորապէս Գանձակի և Բագուի հայութեան ներկայացուցիչները մտել են Ադրբէջանի պարլամենտը և ծրագրային ճառ են արտասանել Թուրք ժողովրդի ներկայացուցիչների առաջ, ողջունելով թէ Ադրբէջանի ինքնորոշումը, թէ Թուրք ժողովրդի ինքնագործունէութիւնը և թէ, վերջապէս, նրա հաստատուն հիմքերի վրայ դրած քաղաքական պայքարը իրենց դարաւոր ճնշիչների և նեղիչների դէմ։ Հայերը իրենց խորին համակրանքը յայտնելով Թուրք ժողովրդին, ցանկութիւն են յայտնել նոյնպէս ամենասերտ գործակցութիւնն ունենալ նրա հետ թէ Թուրք և թէ հայ ժողովրդի քաղաքական բաղդն ու վիճակը տնօրինելու գործում և աջակցել Ադրբէջանի քաղաքական և պետական ղեկավարներին նրանց բոլոր աշխատանքներում՝ երկրում կարգ ու կանոն մտցնելու նպատակով։

Ի վերջոյ Ադրբէջանի հայութեան ներկայացուցիչները արտայայտել են այն միտքը, որ նրանց բոլոր խօսքերն անկեղծ են և որ նրանք մտնում են Ադրբէջանի պարլամենտը ճիշտ այն զգացմունքներով, ինչպէս կը մտնէին Հայաստանի պարլամենտը։

Այսպիսով վերջապէս քանդւում է այն պատը, որ վերջին ժամանակներս արհեստական կերպով բարձրացել էր երկու հարևան ժողովուրդների միջև շնորհիւ թէ այս և թէ այն կողմի անպատասխանատու տարրերի տխուր գործունէութեան և էլ աւելի՝ շնորհիւ սեպտեմբերեան սոսկալի կոտորածին, որին զոհ գնացին մի քանի տասնեակ հազար անմեղ հայ մարդիկ, ըստ մեծի մասին՝ կանայք, երեխաներ և ծերունիներ։

Ադրբէջանի քաղաքական կեանքի ղեկավարները քանիցս արդէն դիմել էին երկրում բնակւող հայութեան ականաւոր ներկայացուցիչներին՝ մասնակցել Ադրբէջանի պարլամենտում և կառավարութեան մէջ և այսպիսով գործակցել նրանց ձեռնարկած շինարար աշխատանքներին յօգուտ երկրում բնակւող բոլոր ազգութիւնների շահերի և բարօրութեան։ Բայց այն ծանր, ճնշող և անբնական մթնոլորտը, որը ստեղծուել էր Ադրբէջանում շնորհիւ թէ վերևում յիշուած հանգամանքների և թէ այն հակասութեան, որ հայ ժողովուրդը տեսնում էր Ադրբէջանի տնօրէնների խօսքերի, հաւաստիացումների և նրանց գործերի և քայլերի մէջ հանդէպ Ադրբէջանի հայութեան՝ ահա այդ մթնոլորտը, որ առաջ էր բերում ակամայ և փոխադարձ անվստահութիւն, թոյլ չէր տալիս մի երկրում ապրող երկու ժողովուրդներին վերջապէս ձեռք մեկնել միմեանց և սկսել երկու կողմերի համար էլ հաւասար չափով կարևոր և անհրաժեշտ շինարար աշխատանքները։

Այժմ այդ արգելքը վերացուած է։ Գործակցելով միմեանց հետ նրանք աւելի հեշտութեամբ կարող են պարզել և վերացնել բոլոր թիւրիմացութիւնները և գտնել երկու կողմերը հաշտեցնող մի ընդհանուր լեզու և գործելակերպ, այնպէս որ ոչ մէկն իրեն վիրաւորուած չզգայ և իր ազգային արժանապատւութիւնը ճնշուած և անարգուած չտեսնի այլևս։

Մենք խորապէս համոզուած ենք, որ բուն ժողովուրդները երբեք միմեանց դէմ թշնամական զգացմունքներ չեն ունեցել և չեն էլ կարող ունենալ ամենևին, քանի որ նրանց կեանքն ու ամբողջ անցեալը իր բոլոր սովորութիւններով այնքան սերտ կերպով կապուած են իրար հետ։

Բայց թշնամութեան սերմերը ընկնում են ժողովրդի սրտի մէջ վերևից, այն շրջաններից, որոնք իրենց ինչ-ինչ քաղաքական մտադրութիւններն իրագործելու համար անհրաժեշտ են գտնում կռուացնել ժողովուրդներն իրար հետ։

Եւ այն փաստը, որ այժմ ժողովուրդների ղեկավար շրջաններն էլ են իրար ձեռք մեկնում, անկեղծ ցանկութիւն յայտնելով մոռանալ անցեալն ու հոգեպէս մօտենալ միմեանց, շատ ուրախալի և ողջունելի մի երևոյթ է և կարող է հաստատ հիմք ծառայել հայ և թուրք ժողովուրդների մշտական և յարատև բարեկամութեան և այժմ արդէն անքակտելի համերաշխութեան։

---

պատասխան լինեն ազգաբնակչութեան կարիքներին, ապա ուրեմն, միւս կողմից, ճիշտ է և այն, որ ծախսերը չեն կարող աւելի բարձր լինել քան ազգաբնակութիւնից ստացուած գումարները... Արդեօք Թիֆլիս քաղաքի բնակիչների վճարած գումարները համապատասխանում են քաղաքի ծախքերին։

Ֆինանսական ուղիղ քաղաքականութիւնը ձգտում է նրան, որպէսզի կարելի լինի նպաստել ժողովրդական հարստութեան աճեցմանը։ Հարստութիւնը չէ ստեղծւում նրանով, որ քաղաքի բոլոր աշխատանքի ընդունակ մասը դարձնուի կառավարչական աստիճանաւորներ, այլ արտադրող աշխատանքով և արդիւնաբերութեան աւելացնելով»։

Վերջացնում է լրագիրը իր յօդուածը պնդելով որ՝

«Ոչ թէ ժողովրդական մասսաների քիչ գիտակցութիւնն է քաղաքի ֆինանսական ծանր դրութեան պատճառը, այլ այն «սխալները» և անպատրաստ անձնաւորութիւնները, որոնք յանձն են առել իրենց անհամապատասխան դերը կառավարելու քաղաքային միլիոնատէր և բարդ տնտեսութիւնը»։

Երբ հարցը հայերին չի վերաբերում, «Գրուզիա» լրագիրն էլ ցոյց է տալիս առողջ դատողութեան ընդունակութիւնը....

# ՎԵՐՋԻՆ ԼՈՒՐԵՐ

## ՀԱՅ ԷՄԻԳՐԱՆՏՆԵՐ

—

Ինչպէս հաղորդում է «Le Mon. Orient.»-ը, փետր. 5-ին Կոնիա հասան 7000 հայ էմիգրանտներ, որոնք թոյլտւութիւն են խնդրում ապրել այնտեղ մինչև գարուն։ Համապատասխան միջնորդութիւն արաւ Սաբրի բէյն, որին ուղարկել էր էմիգրացիայի նպատակով կազմուած յանձնաժողովը և տեղումը քննել այդ խնդիրը։ Կառավարութիւնը տուեց իր համաձայնութիւնը։

Կառավարութիւնը շտապ կարգադրութիւն արաւ Անատոլիայի երկաթուղու վարչութեան՝ շուտով հասցնելու տեղերում նոր հայ էմիգրանտների, որոնց թիւը առայժմ յայտնի չէ։

## ՄԵԾ ԻՇԽԱՆ ԵՕԱՆ ԿՈՍՏԱՆԴԻՆՈՎԻՉ

Ելենա Սերբսկու հարցին իր ամուսին նախկին մեծ իշխան Եօան Կոնստանդինովիչի վիճակի մասին, Ստոկհոլմի ամերիկական դեսպան պ. Մորիսը հեռագրեց Սերբիայի թագաւորին, թէ Եօան Կոստանդինովիչը իր եղբօր հետ սպանուած է բոլշևիկների ձեռքով Ալապաևսկում։

## ՊԱՐԷՆԱՒՈՐՄԱՆ ՕԳՆՈՒԹԻՒՆ ՅՈՅՆԵՐԻՆ

—

Աթէնքից հաղորդում են, թէ համաձայն Դաշնակիցների որոշման, Կ. Պոլսում և Զմիւռնիայում կը բացուեն պարենաւորման պահեստներ յունական կառավարութեան համար։

## ՎԻԼՍՈՆԻ ՄԵԿՆՈՒՄ

—

Չորեքշաբթի առաւօտ Վիլսոնը մեկնեց Եւրոպա զինուորական «Ջորջ Վաշինգտոն» նաւով բուռն ծափահարութեան տակ։

## ՎՐԱՍՏԱՆԻ ԱՊԱԳԱՅ ԿԱՌԱՎԱՐՈՒԹԻՒՆԸ

—

Ենթադրւում է վրաց կառավարութիւնը ապագայում կազմել հետևեալ ձևով. զինուորական և արտաքին գործերի մինիստրութիւնները միացւում են և անցնում Նոյ Ն. Ժորդանիայի ղեկավարութեան ներքոյ, ներքին գործերի, արդարադատութեան և ժողովրդական լուսաւորութեան մինիստրութիւնները միացւում և անցնում է Ն. Վ. Ռամիշվիլու ղեկավարութեան ներքոյ, միացած ֆինանսների, առևտրի, արդիւնաբերութեան և երկրագործութեան մինիստրի պորտֆէլն առաջարկուել է անկուսակցական Իւրիյ Գազաւային։

## ՔՐԻՍՏՈՆԵԱՅ ԶԻՆՈՒՈՐՆԵՐ

—

«Le Mon. Orient.»-ը փետր. 9-ին հաղորդում է, թէ տաճկական նախարարների խորհուրդը համաձայնութիւն տուեց անգլիական հրամանատարութեան առաջարկութեանը՝ արձակել հայ և յոյն զինուորներին։ Սպասւում է համապատասխան կարգադրութիւն։

## ԴՐՈՒԹԻՒՆԸ ՊԱՂԵՍՏԻՆՈՒՄ

—

Եաֆայից և Երուսաղեմից Կ. Պոլսում ստացուած տեղեկութիւններից երևում է, որ Պաղեստինի դրութիւնը գերազանց է։ Ոչ թէ միայն վաղուց է որ ազգաբնակութեան մէջ արդէն մտած է սովորական կեանքը, այլ և շնորհիւ անգլիական իշխանութեան՝ վաճառականութիւնը և բոլոր ուրիշ գործերը ծաղկման դրութեան մէջ են։ Ազգաբնակութեան մեծ մասը, որ առաջ օժանդակութեամբ էր ապրում, այժմ ապրում է իր աշխատանքով։ Անգլիացիները սկսել են մի շարք հասարակական ձեռնարկութիւններ։ Եգիպտոսի դրամատների մեծ մասը և արդիւնաբերական ընկերութիւնները Պաղեստինում արդէն բաց են արել կամ բանալու են իրենց բաժանմունքները։

(«Зак. Сл.»)

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱԽՈՒԹԵԱՆ ԱՄԵՐԻԿԱԿԱՆ ՅԱՆՁՆԱԺՈՂՈՎԸ

—

Նիւ-Եօրկից Կ. Պոլսի թերթերին հեռագրում են, որ Նիւ-Եօրկում, Բերլինի նախկին ամերիկական դեսպան Ժերարի նախագահութեամբ կազմուած է Հայաստանի անկախութեան ամերիկական մի ազդեցիկ յանձնաժողով։ Յանձնաժողովի մէջ մտնում են մի քանի յայտնի ամերիկական գործիչներ։ Յանձնաժողովը իրեն նպատակ է դրել աջակցել հայկական անկախութեան գործին։ Յանձնաժողովի հիմնադիրները և Հայաստանի բազմաթիւ բարեկամները բազմամարդ մի ժողով կազմեցին, ուր ստացուեցին Հայաստանի անկախութեան համակրական հեռագիրներ թէ նախագահ Վիլսոնից և թէ Դաշնակից պետութիւններից։

(«Зак. Сл.»)

## ԲԱԳՈՒ

—

Գեն. Պրժևալսկու հրամանը.—Հրաման Անդրկասպեան, Կասպից ծովի ափերի և Նաւատորմիղի զօրքերին 1 մարտի 1919 թ.—Ի նկատի ունենալով անգլիական հրամանատարութեան պահանջը, վաղը, մարտի 1-ին, ժամը 16-ին բոլոր ռուսական մասերը, հարաւ. Ռուսաստանի զինուած ուժերը պէտք է դուրս գան Բագուից և ժամը 24-ին մաքրեն Բագուի զինուորական նահանգապետութեան սահմանները։

Հրամայում եմ.—1, շտաբին և ինձ հաւատացած բոլոր մասերին անցնել դէպի Պետրովսկ երկաթուղով և ծովային ճանապարհով. 2) այն մասերը, որոնք նշանակուած են Անդրկասպեան շրջանը գնալու, նստել նաւերը և գնալ Կրասնովոդսկ համաձայն ցուցման Անդրկասպեան կառավարութեան զինուորական նախարար գեն. մայոր Կրուտէնի. 3) մանրամասն կարգադրութիւն կը տայ Մերձկասպեան շրջանի զօրքերի շտաբի պետը. 4) մարտի 1-ին, առաւօտեանից զօրամասերի պետերը և հիմնարկութիւնները կը ստանան մատակարարման գլխաւոր պետից ճանապարհածախսերի համար աւանսներ, ուտելիք, լիկվիդացիական և փոխադրական միջոցներ. 5) Նաւատորմիղի հրամանատարը պէտք է բոլոր կարգադրութիւններն անէ իր ստորադրեալ նաւերին և ստորաբաժանումներին, ստանալով այդ բանի համար ցուցմունքներ անգլիական հրամանատարութիւնից։

Իսկականի վրայ ստորագրել է զօրքերի հրամանատար ինֆենտ. գեներալ Պրժևալսկի։

(Зак. Сл.)

## ԱՂԱ ՄՈՒՍԱ ՆԱՂԻԵՒԻ ՄԱՀԸ

—

Բագւում բծաւոր տիֆից վախճանուել է յայտնի թուրք միլիոնատէր Աղա Մուսա Նաղիեւ։

## ՀԱՑ ԿԱՐՍԻՑ

—

Մարտի 3-ին Կարսից Ալեքսանդրապոլ է բերուել 12 վ. հացահատիկ։

## ՆԱԽԱՐԱՐԱԿԱՆ ՃԳՆԱԺԱՄ ՏԱՃԿԱՍՏԱՆՈՒՄ

—

Ռէյտերի գործակալութեանը փետրուարի 12-ից Սալոնիկից հաղորդում են.—Կ. Պոլսից հաղորդուած տեղեկութիւններից երևում է, որ Դաշնակիցների եռանդուն պահանջների պատճառով Տեֆիկ փաշայի կաբինետը հրաժարական տուեց, որպէսզի տաճկական կառավարութիւնը դադարեցնի գերութիւնից չազատուած յոյների և հայերի դէմ ունեցած տերրորը և անմիջապէս վերադարձնէ այն հարիւր և հազարաւոր յոյների և հայերի գրաւուած գոյքերը, որոնք ուղարկուած էին պատերազմի ընթացքում։ Սուլթանը ինքն է յանձն առնում կազմել կաբինետը»։

„Зак. Сл."-ի խմբագրատանը մինչև փետր. 15-ը Կ. Պոլսից ստացուած թերթերից երևում է, որ կաբինետի ճգնաժամի հարցը շատ հասունացած է, թէև մի քանի նախարարութիւններ նկատում էին, թէ ամեն ինչ կարգին է և ճգնաժամի պատճառ չկայ. բայց, մինչև այդ ժամանակ, կաբինետի բաղդը տակաւին որոշուած չէր։ Նրանից յետոյ կաբինետի վիճակի մասին որոշ ոչ մի տեղեկութիւն չէ ստացուած։

(«Зак. Сл.»)

## ԿՐՕՆԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄ ԻՆԳՈՒՇՆԵՐԻ ԵՒ ՉԵՉԵՆՆԵՐԻ ՄԷՋ

—

Ի նկատի ունենալով Կամաւորական բանակի ռեպրեսիաները և բռնի գործողութիւնները ինգուշների և չեչենների վրայ, որոնք չեն ճանաչում նրանց իշխանութիւնը, նրանց մէջ աճում է կրօնական շարժում — միւրիդիզմը։ Մինչև չորս հազար մարդ թողին իրենց տները, խաղաղ գիւղերը և գնացին դէպի լեռները, երդուելով կռուել մինչև Դենիկինին հայրենիքից դուրս քշելը։

## ԼԵՌՆԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹԻՒՆՆԵՐԸ

—

Համաձայն լուրերի՝ այն լեռնականները, որոնք չեն ճանաչում Կամաւորական բանակի իշխանութիւնը, Գրոզնիի տակ քարուքանդ են անում նոր շինուած երկաթուղագծերը և թոյլ չեն տալիս Կամաւորական զօրամասերին առաջ շարժուել։ Լեռնականներն ամենուրեք դիմադրութիւն են յայտնում Դենիկինի կառավարութեան դէմ, որ ոչ մի վճռական քայլ չէ անում Կամաւորական բանակին դիմադրելու։

## ՌՈՒՄԻՆԻԱՆ ԱՐԳԵԼՈՒՄ Է ՌՈՒՍ ՌԱԶՄԱԳԵՐԻՆԵՐԻՆ ՀԱՅՐԵՆԻՔ ՎԵՐԱԴԱՌՆԱԼ

—

Ռուս ռազմագերիների Ռումինիայի վրայով Ռուսաստան վերադառնալու փորձը անցաւ անյաջող։ Բուդապեշտում նրանց նախազգուշացրին, թէ ռումինները նրանց համարում են որպէս բոլշևիկներ և գնդակահարում են։

## ԲՐՈՒՍԻԼՈՎԸ ՄԵՐԺՈՒՄ Է ԳԼԽԱՒՈՐ ՀՐԱՄԱՆԱՏԱՐՈՒԹԵԱՆ ՊԱՇՏՕՆԸ

—

12-րդ բանակի նախկին հրամանատար գեն. Պարսկին այցելեց Բրուսիլովին և խնդրեց ընդունել բոլշևիկների ապալչենիայի գլխաւոր հրամանատարի պաշտօնը։ Բրուսիլովը մերժեց։ Պարսկին կառավարում է Մոսկուայի պաշտպանութիւնը։

## ԴՐՈՒԹԻՒՆԸ ԲՈՒԼՂԱՐԻԱՅՈՒՄ

—

Յունական պաշտօնական աղբիւրները հաղորդում են, թէ Սոֆիայից ստացուած հաւաստի աղբիւրի հաղորդագրութիւնից երևում է, որ բուլղարացիները առաջուայ նման երկդիմի դիրք են բռնել դէպի Դաշնակիցները, նամանաւանդ դէպի սերբերը և յոյները։ Նրանք համոզուած են, թէ Դաշնակիցների մէջ մեծ անհամաձայնութիւն է տիրում և երբ նրանք աւելի պարզ ձև կը ստանան, այն ժամանակ Բուլղարիան իր օգուտները կը քաղէ։

# ՎՐԱՍՏԱՆ

—oo—

## ԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

—

### Գործադուլական շարժում Գերմանիայում

Վէյմարից ստացուած ստոյգ տեղեկութիւններից երևում է, որ Բերլինի սոցիալիստ մեծամասնական ներկայացուցիչների և կաբինետների մէջ տեղի ունեցած խորհրդակցութիւնից յետոյ՝ կողմերի մէջ համաձայնութիւն կայացաւ։ Հինգշաբթի, գիշերային գնացքով Բերլին վերադարձաւ բանուորների դեպուտացիան՝ կառավարութեան առաջարկութիւնը գործադուլ անող բանուորներին յայտնելու։ Ենթադրում են, թէ այդ առաջարկութիւնները, ճանաչուած բանուորական խորհուրդների և զինուորական դեպուտատների կողմից՝ կընդունուին կոնստիտուցիայի կողմից։

Կենտրոնական կառավարութիւնը որոշեց ճնշել ընդհանուր գործադուլը զէնքի ուժով։ Բերլին մըտան պոլկ. Ռէյնգարտի կամաւորական զօրամասերը և գեն. Ֆոն-Դատվեյը թնդանօթներով։ Բերլինի փողոցներում շրջում են ուժեղ պահակներ։ Բերլինի կոմենդանտը դիմեց ազգաբնակութեանը մի կոչով, սպառնալով ծայրայեղ միջոցներ ձեռնարկել հաւաքոյթների և գործադուլաւորների դէմ։

## ՖՐԱՆՍԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

—

ՆԻՒ-ԵՕՐԿԻՑ հաղորդում են.—Երեքշաբթի երեկոյեան, «Միտրոպոլիտէն» օպերային թատրոնում, նախագահ Վիլսոնը, ժողովուրդների դաշնակցութեան մասին մի սենսացիոն ճառ արտասանեց։ Ժողովին ներկայ էին շատ քաղաքական և ֆինանսական գործիչներ, խոշոր առևտրական ներկայացուցիչներ, ինտելիգենցիան և բարձր հասարակութիւնը։ Վիլսոնը բեմ գալուն պէս ներկայ եղողներից ընդունուեց երկար և աղմկալից ողջոյնով։ Վիլսոնը յայտնեց թէ չի վերադառնայ Եւրոպայից, մինչև չը կատարի իր միսիան, որպիսին դրել է Ամերիկան, այսինքն—համաշխարհային խաղաղութեան հաստատումը։ Նա պահանջում է ազատուած ժողովուրդների ազատ զարգացումն և ասում է, որ Եւրոպայի պետական մարդիկ օր-աւուր մտնում են ժողովուրդների դաշնակցութեան գաղափարի մէջ։ Վիլսոնը խօսում էր հասարակ, ամուր և պարզ ձայնով, առանց որևէ պաթոսի, մեծ համոզմունքով, իսկ երբեմն սաստիկ վրդովմունքով։ Լսողները խորապէս ազդուեցին նախագահի ճառից և ծածկեցին նրան բուռն ծափահարութիւններով։

—

### Էլզաս-Լոտարինգիայի մասին օրէնքներ

Էլզաս-Լոտարինգիայի կառավարական կոմիսար Մարինգերը, կարճ ժամանակ Պարիզում մնալուց յետոյ, նորից վերադարձաւ Ստրասբուրգ. Նա յայտնեց «Պտի Ժուրնալի» ներկայացուցչին, թէ Էլզա Լոտարինգիայի վերաբերմամբ վերջնական օրէնքները կը մշակուին մօտակայ ժամանակներս։

## ԱՆԳԼԻԱԿԱՆ ՄԱՄՈՒԼ

### Գերմանական զօրքը

Ինչպէս արդէն ենթադրուած էր, գերմանական զօրքը պէտք է բաղկանար 250,000 զինուորից և 9000 սպաներից։ Այդ թւից 20,000 վերաբերւում են այն սպաներին, որոնք չունեն լիակատար ստաժ։ Վերջինների ծառայութիւնը լինելու է 15 տարի, սպաները չպէտք է ծառայեն 25 տարի։ Նորակոչ զինուորները պէտք է ծառայեն 1 տարի և նրանց թիւը ոչ մի զօրամասում չպէտք է լինի բարձր (եղծուած)։ Այդ զօրամասերը պէտք է հաւաքուեն վիճակով կամ գերմանական կառավարութեան ցանկութեամբ, ուրիշ եղանակով։ Բանակը պէտք է բաժանուի 15 հետևակ և 5 հեծելազօր դիվիզիաների, հինգ կորպուսի գեներալներով և մէկ բանակի գլխաւոր գեներալով։ Օդային ուժերը պէտք է կրճատուեն մինչև 1000 սպայի և այդ թիւն էլ պիտի քննութեան առնուի հոկտեմբեր ամսին 1919 թ.։

### Ֆրանսիական ծրագիրը Ռէյնի գաւառների մասին:

Մի քանի նշաններից հաւանական է թւում, որ գերմանական արևմտեան սահմանների Ռէյնի գաւառների սուֆերնի պետութեան կազմութեան ֆրանսիական ծրագիրը հաւանութիւն կստանայ տասի խորհրդի կողմից։ Եթէ նշանակուած ժամանակամիջոցում, որի ընթացքում Գերմանիան պէտք է կատարէր իրեն վրայ գրուած պարտաւորութիւնները, ազգաբնակութիւնը ձայն կը տայ դէպի հայրենիք լռուէին վերադարձը, այդ դէպքում միջոցներ կը ձեռնարկուեն, որպէսզի այդ կատարուի [illegible]։ Այդ առթիւ խորհրդի մէջ վերջնական խորհրդածութիւն չէ եղել, բայց Ամերիկական և Անգլիական գեներալների կողմից այդ ծրագիրը համակրութեամբ է ընդունւում։

### Ժողովուրդների դաշնակցութիւնը

Ինչպէս երևում է, ամէն կողմերից մեծ հոսանք է նկատւում դէպի ժողովուրդների դաշնակցութիւնը։ Կասկած չկայ, որ նրա օրէնք կազմութեան ձևը (եղծուած) Անգլիացիք հաւատացած չեն, որ դաշնակցութիւնը կարող է իրականանալ այն արագութեամբ, ինչպէս կարծում են ամերիկացիները։

### Պարիզի կեանքը

Ֆրանսիական կառավարութիւնը միջոցներ է ձեռնարկում թանգութեան դէմ, յոյս ունենալով Պարիզում մթերքի գները իջեցնել 40 տոկոսով, մօտակայ օրերում։ Զանազան հասարակական հրապարակներում շինուած են 15 մեծ ծածկոցներ, ուր մթերքներ են վաճառուելու հսկողութեան տակ։ Ենթադրութիւն կայ, մօտիկ ժամանակներում, նորից շինել այդպիսիներ։ Օրական բաժինը, ըստ միջազգային յանձնաժողովի որոշման, միջին թւով Պարիզում նստում է 65 ցենտ, Նիւ-Եօրկում—42, Լոնդոնում 35. ըստ կառավարութեան նոր ձևի, Պարիզում կարժենայ ընդամենը 39 լենտ։ Կառավարութեան վաճառուած պարենաւորման մթերքները մեծ մասամբ բերուել են և գնուած միջազգային պարենաւորման յանձնաժողովների ձեռքով։ Կառավարութիւնը յոյս ունի իջեցնել նաև միւս անհրաժեշտ մթերքների գները անմիջական ճնշումներ գործադրելով։ Կառավարական ուտեստի մթերքները կը բերուեն նաւահանգիստներից յատուկ նշանակուած վագոններով։ Եթէ Պարիզում ձեռնարկած փորձերը յաջողութիւն ունենան, այդ ձևը կը մտցնուի և միւս քաղաքներում, ուր վաճառքը կը կատարուի քաղաքային անդամների կամ փորձուած վաճառականների ձեռքով, բայց կառավարութեան հսկողութեան ներքոյ։

## ՔՐՈՆԻԿՈՆ

Կիրակի, մարտի 9-ին, առաւօտեան ժամը 10-ին Յովնանեան դպրոցի դահլիճում կը կայանայ Մանկավարժական խմբակի հերթական դասախօսութիւնը։ Կը խօսէ պ. [illegible] Մարգարեանը «Հոգեկան հիւանդներ» նիւթի մասին։ Դասախօսութիւնից յետոյ կը լինի ժողով, կանոնադրութիւնը հաստատելու և քննելու այլ կարևոր հարցեր։

◆ **Յովհ. Թումանեանի ծննդեան 50-ամեակի առիթով.**— Երևանից ժողովրդական լուսաւորութեան մինիստր Գ. Մելիք-Ղարագեօզեանը Յովհ. Թումանեանին հեռագրում է. «Իմ, ուսուցչութեան, աշակերտութեան և ձեր երգերում փայփայած Հայաստանի ժողովրդական լուսաւորութեան մինիստրութեան բոլոր վարչութիւնների կողմից շնորհաւորում եմ ձեզ որպէս բանաստեղծի, հասարակական գործչի և մանուկների բարեկամի, ձեր ծննդեան 50-ամեակի առիթով»։

—Կովկասի լեռնականների միութեան օրգան «Сѣверный Кавказъ» թերթի խմբագրութիւնը գրաւոր շնորհաւորանք է ուղարկել Յովհ. Թումանեանին։

— Սենատոր Հ. Դ. Սոկոլովը Յովհ. Թումանեանին ուղարկել է շնորհաւորանքի մի գրութիւն, որի մէջ յիշատակելով Թումանեանի և Կորոլենկոյի հանդիպումը Պետրոգրադում, ի միջի այլոց ասում է. «Մենք, ռուսներս, սովոր ենք Վ. Գ. Կորոլենկոյի վրայ նայել ոչ միայն որպէս գրող-գեղարուեստագէտի, այլ և նա մեզ համար խիստ և որոշ արտայայտութիւն է հասարակական խղճի։ Դէպի ձեզ այդպէս է վերաբերւում հայ հասարակութիւնը»։

◆ **Սպանութիւն.**—Մարտի 6-ին ցերեկուայ ժամը 12-ին մի անյայտ տղայ, որ գնած է եղել Սումբաթովի բաղանիքի բակում, հրացանով սպանուել է 15 տարեկան Մուրադ Ալօեանի ձեռքով։

◆ **Դիակ.**—Մարտի 6-ին սուրբ Կարապետի ձորում գտնուել է մի անյայտ մարդու դիակ պարկի մէջ առանց գլխի։

◆ **Աբխազիայի ժողովրդ. խորհրդի բացումը.**—Աբխազիայի ժողովրդական խորհրդի բացմանը վրաց կառավարութեան կողմից մասնակցելու է արտաքին գործերի մինիստր Եւ. Գ. Գեգեչկորին, իսկ եթէ նա չկարողանայ որևէ պատճառով մեկնել այն տեղ յանձնարարուած է Իսիդոր Ռամիշվիլուն վրաց կառավարութեան յայտագիրը կարդալ։

◆ **Յատուկ կոմիտէ.**—Վրաց կառավարութիւնը արտաքին գործերի մինիստրին յանձնարարել է բանակցել գաղթականներին օգնող Ամերիկեան կոմիտէի հետ գաղթականներին օգնող մի յատուկ կոմիտէ կազմելու համար, որի մէջ մտնելու են բոլոր ազգերի ներկայացուցիչները։

◆ **Բորչալուի գաւ. վնասուածների համար.**—Վրաց կառավարութիւնը ներքին գործերի մինիստրութեան տրամադրութեան տակ է դրել 500,000 ռ. հայ-վրացական պատերազմի միջոցին Բորչալուի գաւ. վնասուած գիւղերին օգնութիւն ցոյց տալու համար։ Բացի այս, յանձնարարուել է նոյն մինիստրութեան կից հիմնել օգնութեան կոմիտէ՝ նման դէպքերում վնասուածներին օգնութիւն ցոյց տալու համար և բժշկա-սանիտարական խմբեր կազմել և Բորչալուի գաւառ ուղարկել համաճարակի դէմ մաքառելու համար։

◆ **Պարենաւորման յանձնաժողով.**—Վրաստանի պարենաւորման գործը կանոնաւորելու համար վրաց կառավարութիւնը որոշել կազմել մի յատուկ յանձնաժողով, որին և պիտի յանձնել պարենաւորման կենտրոնական խորհրդի գոյքը։

### ՀԱՐՈՒԱԾԸ ԱՒԵԼԻ ՈՒԺԵՂ Է ԼԻՆՈՒՄ, ԵՐԲ ՀԱՅԸ ՀԱՅԻՆ Է ԿՈՂՈՊՏՈՒՄ

1918 թ. ապրիլի 11-ին ես իմ ընկեր Խ. Ամիրանի հետ ձեռքերս ծոցերս դրած շուարած կանգնել էինք մեր դռանը, որովհետև ոչ մի հնարքով չկարողացանք գոնէ մի կառք էլ գտնել, որ մեր հագնելիքները և մի քիչ ուտելիք բառնայինք և հասնէինք կայարան։ Թէ ես և թէ իմ ընկերը տանելու համար պատրաստել էինք գարնան, ամռան, աշնան և ձմեռուան հագնելիքները։ Այժմեան գներով միայն իմ հագնելիքները առնուազն արժէր 15 հազար մանէթ. իսկ ընկերս, որպէս պետական ծառայող, (ստատսկի սովետնիկ), ունէր 20 հազար մանէթի։ Կրկնում եմ, այժմեան գներով դեռ քիչ եմ գնահատել։

Այսպիսի յուսահատ դրութեան մէջ թողեցինք մեր բնակարանները ըստ ամենայնի զարդարուած դրութեան մէջ, գորգերը փռած, ջահերը կախած.

Սեղանները ծածկոցներով, պահարանները լի զանազան առարկաներով. խոհանոցում իւղ, պանիր, գետնախնձոր, ինքնաեռ, չայ, շաքար, կերասին, վառելիք, զանազան տեսակ ամանեղէններ և այլ տնական կահկարասիք։ Այս բոլորից անցանք, գոնէ մեր հագնելիքները ազատէինք։ Քաղաքը դատարկուել է, ոչ ոք չի երևում, փողոցներում լցուած են անտէր ոչխարներ, եզներ, կովեր, շներ, կատուներ։ Այսպիսի յուսահատ դրութեան մէջ նկատեցինք, որ մեր հարևանի դրանը մի ֆուրգոն են բառնում։ Դիմեցինք դրանց օգնութեան. հայ զինուորներ էին։ Դուրս եկաւ սենեակից դրանց մեծը՝ մի հայ սպայ, պոդպորուչիկ, բաժնամասի կոմենդանտ Բուդաղ Եղեան։ Ծանօթ դուրս եկաւ ընկերիս. համբուրուեցաւ և հիւրասիրեց մեզ և հրամայեց իր հայ զինուորներին վեր առնել մեր կապոցները ֆուրգոնի վրայ։ Կատարուեցաւ հրամանը։

— Անհոգ կացէք, յուսադրեց մեզ հայ օֆիցերը, պ. Բուդաղ Եղեանը. մենք միասին մի կուպէում կը նստենք և միասին կը հասնենք Թիֆլիս։ Ինձ համար և իմ իրեղէնների համար վագոնը արդէն պատրաստ է։

Շնորհակալութիւն յայտնեցինք և ֆուրգոնի հետ ճանապարհ ընկանք։ Ֆուրգոնը շատ արագ էր գնում, մենք ոտով չէինք հասնում յետևից։ Զինուորները ձայն տուին՝ «պ. վարժապետ, ինչո՞ւ էք վազում, ինչո՞ւ էք չարչարւում, գնացէք կայարան և մեզ սպասեցէք, մենք ուրիշ տեղ բառնալու բան ունենք և մի ժամից յետոյ կը լինենք կայարանում»։

Հայ քրիստոնեայ և հայ զինուոր, ինչ իրաւունք ունենք չհաւատալու, մանաւանդ նրանց սիրալիր ընդունելութիւնը տեսնելուց յետոյ։

Հեռացաւ ֆուրգոնը. կորցրինք իրար, գնացինք կայարան, երկար՝ շատ երկար սպասեցինք, ամբողջ գիշեր սպասեցինք, ոչ սպան երևաց և ոչ իր զինուորները։ Լուսացաւ. ապրիլի 12-ին առաւօտ ժամը 4-ին կայարանի կառավարիչ պ. Շաղբաթովի շնորհիւ մեզ տեղաւորեցին մի կուպէում։ Ապրիլի 16-ին մտանք Թիֆլիս և սկսեցինք հարց փորձ անել և վերջապէս գտանք մեր սիրալիր հիւրասիրող պ. Բ. [illegible]եանին և պահանջեցինք մեր իրեղէնները։ Բացուեցաւ քննութիւն, միջամտեցին զանազան մարդիկ, գործը իրար վրայ գցեցին, հետքը կորցրին և մեր բոլոր իրեղէնները ոտով-գլխով կերան, և մենք Թիֆլիսի մէջ մնացինք բոլորովին մերկ, մի ձեռք հասարակ հագուստով։ «Ժողովրդի Ձայն»-ի խմբագրութիւնը ականատես է, թէ ես որպէս 49 տարուայ ուսուցիչ 44 տարուայ թղթակից, որպիսի մուրացկանի հագուստով, ամաչելով, քաշուելով մտնում եմ խմբագրատուն և դուրս գալիս։ Իմ գզգզուած վերարկուս պ. Սալմանը ֆելիէտոնի նիւթ շինեց։ Այսպիսի մուրացկանի հագուստի մէջ գտնուող մարդուն ճանաչողները ծաղրում էլ են։ Ուրեմն թոյլ տուէք մեզ կրկնելու՝ «հարուածը աւելի ուժեղ է լինում, երբ հայը, հային է կողոպտում»։ Դատեցէք մեր ճանապարհորդութեանը։ Գ. Եղիանի համբոյրը Յուդայի համբոյրը դառաւ։

### Կարսից մինչև Թիֆլիս

Անյուսան կապել էին ժողովրդին։ Մինչև ապրիլի 11-ը Կարսի ժողովրդի ղեկավարները խաբուսիկ յոյսերով օրօրում էին, միշտ կրկնելով «բան չկայ, անառիկ Կարսը չի կարող Թուրքի կերակուր դառնալ»։ Այսպէս ասողները արդէն շատ վաղուց իրենց ընտանիքը և տան կահկարասիք, մինչև անգամ աւել ցախաւելը հասցրել էին Թիֆլիս։

Մնացել էր միայն աղքատ դասակարգը և փոքրիկ վագոն գնողների շարքերից դուրս նիւթական միջոցներից զուրկ դասակարգը։

Այսպէս խաբելով ժողովրդին պահեցին մինչև ապրիլի 11-ը։ Այդ օրը, երբ երկու կողմի թնդանօթները փոխադարձաբար գոռում էին մօտակայ վտանգը, ժողովուրդը հեղեղի պէս թափուեց կայարան և առաջ եկաւ այնպիսի մի չտեսնուած իրարանցում, գոռում,-գոչում, աղմուկ, աղաղակ, ծեծ, հայհոյանք, քաշքշել, կողոպտել, վայնասուն, ողբ, սուգ ու շիւան, որ գրչով այդ խառնափնթոր տեսարանը նկարագրել անկարելի է։ Թափուել էին բոլոր վագոնների մէջ կարիդորներում, արտաքնոցներում, մեքենավարի մօտ, պարաւոզի շուրջը, իսկ վագոնների կտուրներում ասեղ գցելու տեղ չկար։ Իսկ բազմաթիւ մեղաւորներ, խեղճեր շուարած մնացել էին և վազվզում այս վագոնից այն վագոնը, տեղ փնտռում, բայց տեղ չկար։ Ուստի յուսահատուած, ամեն բան պլատֆորմի վրայ թողած, երեխեքի ձեռքից բռնած ոտով ճանապարհ է ընկնում։ Ահա այդ ժամանակ ճակատից փախած զինուորները հրդեհ էին գցում քաղաքի մէջ. տները կողոպտում, ոմանք էլ կայարանում գոռում էին. «Շուտ արէք, փախէք, այս րոպէիս թուրքը այստեղ կը հասնի»։ Այսպիսի սուտ սպառնալիքներով փախցնում էին ժողովրդին կայարանից, իսկ իրենք սկսում էին դաշոյններով կտրատել կապոցները և միջից հանում թանկագին իրեղէնները և իւրացնում։ Կայարանից մինչև առաջիկայ կամուրջը համարեա մի վերստ կը լինի, այդքան տարածութեան վրայ իրար վրայ դարսած հակերը, կապոցները և զանազան առարկաներ ձևացնում էին մի լեռնաշղթայ։ Հետևեալ առաւօտը, ապրիլի 12-ին, ժամը 4-ին գնացքը ճանապարհ ընկաւ։ Օրը սարսափելի ցուրտ էր. անձրևը առատօրէն թափւում էր ցեխակոյլ փախստականների վրայ։ Բոլորը ցեխ ու ջուր էին դառել. փախչում էին ոտով, էշով, սայլով, ֆուրգոնով։ Երկաթուղու գծից դուրս, ճանապարհի երկու կողմերում թափուած էին ալրի մեշոկներ, ցեխի մէջ տրորւում էին տեղաշորեր, պաշարեղէնները ցեխի մէջ թաղուել մնացել էին, յոգնած եզներ իրենց սայլերում լծած՝ տէրը չկայ, նա փախել է, ցանկացողը քանդում է եզները և քշում։ Ցեխակոլոլ են եղել ուժից ընկած ծերունիներ, անտէր երեխաներ, կիներ, օրիորդներ։ Բոլորը կորցրել են իրար, հարազատը հարազատին ուրացել է մայրը, իր զաւակին ցեխի մէջ թողած աշխատում է իր չոր գլուխը ազատել։ Խիղճը, գութը, մարդասիրութիւնը բոլորովին չքացել են։ Գոռում են թնդանօթները և իրենց ահաւոր ձայնը սարսափեցնում ցեխակոլոլ թշուառներին։ Կարսից մինչև Ալէքսանդրապօլ նոյն ողբալի տեսարանը, նոյն ցուրտն ու անձրևը։ Ողորմելիքը դառել էին ամբողջապէս ցեխ ու ջուր։ Ահա մի անտէր կին չորս երեխաներով. ամենամեծը 12 տարեկան, երկուսը շալակել է. մէկի ձեռքից է բռնել, ամենամեծը ցեխի մէջ թաղուել է. օգնութիւն է աղաղակում։ Բայց ո՞վ ժամանակ ունի օգնելու։ Ես հաւատացած եմ, այդ թշուառ մայրը իր չորս զաւակներով ցեխի, ցրտի, անձրևի մէջ պիտի նահատակուի։ Նա արդէն ուժասպառ էր, էլ չէր կարողանում շարունակել ճանապարհը։ Որպէս ականատես շատ թոյլ կերպով նկարագրեցինք այդ փախստականների ողբալի դրութիւնը մինչև Ալէքսանդրապօլ։ Ալէքսանդրապօլից մինչև Թիֆլիս մի ուրիշ անգամ։

Սարիբէկ Տէր-Մելքիսեդեկեան

## ԲԱԳՈՒ

### Ընդհանուրի տեղեկութեան համար

Ի նկատի ունենալով, որ ռուսական Կասպեան նաւատորմիղը չըկատարեց իր հրամանատարութեան հրամանը և զինաթափ չեղաւ և չարձակեց իր կազմը, և որովհետև նաւատորմիղը փորձ արաւ առանց թոյլտւութեան Բագուից հեռանալ, ուստի բրիտանական հրամանատարութիւնը, Բագու քաղաքի բնակչութեան ապահովութեան և հանգստութիւնը պահպանելու համար, կարևոր համարեց խառնուել այդ գործի մէջ։ Ռուսաց Կասպեան նաւատորմիղին հրաման է տրուած՝ յանձնել իրենց նաւերը բրիտանական սպաներին, որոնք անհրաժեշտ մասերը՝ մեքենաները և թնդանօթները հանելուց յետոյ, նորից կը վերադարձնեն ռուսական իշխանութեանը և կը տարուեն ցոյց տրուած տեղերը։

Բրիտանական հրամանատարութիւնը այդ գործողութիւնը ցանկանում է կատարել առանց արիւնհեղութեան, ուստի նախազգուշացնում է, որ նա ունի կարևոր ուժեր կատարելու այդ խնդիրը իր ամբողջ ծաւալով։

Եթէ նաւերը նորից ծով դուրս կը գան, այդ դէպքում Կասպից ծովի բոլոր [illegible] նրանց առաջ կը փակուեն, ուստի կամանդաները [illegible] անձնատուր լինել։

Բագուի բրիտանական հրամանատարութիւն։

### Բագուի պարենաւորման հաւատարմատարը

Պարենաւորման նախարարութիւնը Բագուի պարենաւորման հաւատարմատարի պաշտօնով հրաւիրել է գեն. Մուշինսկուն։

# ՀԱՅԱՍՏԱՆ

### ԱՐԵՒՄՏԱՀԱՅՑ Բ. ՀԱՄԱԳՈՒՄԱՐԸ

1919 փետր. 4-ին, Հայաստանի Հանրապետութեան մայրաքաղաք Երևանի մէջ կայացաւ Հայաստանի Հանրապետութեան սահմաններուն մէջ ապաստանող փախստական արևմտահայութեան Բ. համագումարը։

Փետր. 6-ին Հայաստանի Խորհրդարանին մէջ տեղի ունեցաւ համագումարի պաշտօնական բացումը։

Ներկայ էին՝

ա. Ամենայն Հայոց Վեհափառ Կաթողիկոսի ներկայացուցիչ՝ Տ. Գէորգ եպիսկ. Ջեօրէքչեան։

բ. Հայաստանի Հանրապետութեան Կառավարութեան կէդմէ՝ մինիստր-նախագահ՝ պ. Յովհ. Քաջազնունի։

գ. Հայաստանի Խորհրդարանի կողմէ՝ պ. Ս. Վրացեան։

դ. Խնամատարական Նախարարութեան կողմէ՝ պ. Ալէքսանդր Յակոբեան։

ե. Լոնդոնի լորդ մայորի կողմէ՝ պ. Ս. Թոփալեան։

զ. Էջմիածնի Միաբանութեան և «Եղբ. Օգնութեան» կողմէ՝ Տ. Կորիւն վարդ. Սահակեան։

է. Կովկասի Հայոց Բարեգործ. Ընկերութեան կողմէ՝ պ. Երուանդ Յարութիւնեան։

Ժողովին հրաւիրուած էին նաև Դաշնակից պետութեանց Թիֆլիսի ներկայացուցիչները, որոնք ներկայ չէին։ Յատուկ տոմսերով ներկայ էին նաև բազմաթիւ հանդիսականներ։

Ժողովին կը նախագահէին պ.պ. Գրիգոր Պուլղարացի, Վ. Տէրոյեան և Վ. Քրմոյեան, քարտուղարութեամբ պ.պ. Արսէն Կիտուրի և Յ. Վարդապետեանի։

Համագումարը բացաւ պ. Գր. Պուլղարացին։

Յոտընկայս կարդացուեցաւ Վեհափառ Կաթողիկոսի օրհնութեան կոնդակը։ Ողջոյնի խօսքեր ըրին բոլոր հաստատութեանց ներկայացուցիչները։ Կարդացուեցաւ նոյնպէս գեն. Անդրանիկի Սիսեանէն ղրկուած ողջոյնի նամակը, ինչպէս նաև զանազան հաստատութեանց ողջոյնի հեռագիրներն ու նամակները։

Համագումարը ինն օր տևեց և ունեցաւ եօթը պաշտօնական նիստ։ Ներկայ էին Հայաստանի Հանրապետութեան 15 շրջաններու 200,000, փախստական արևմտահայութեան 50 ներկայացուցիչներ, ինչպէս նաև 2 եզիդի պատգամաւորներ, նախկին Արևմտահայ խորհրդին մէկ քանի անդամներ, զանազան հաստատութեանց ներկայացուցիչներ, համագումարը կազմակերպող կոմիտէն և Արևմտահայ մամուլի ներկայացուցիչներ։ Խորհրդակցական ձայնի իրաւունքով հրաւիրուած էին Արևմտահայ գործիչներ և մտաւորականներ։ Պատգամաւորութիւնը, այսպիսով, կը բաղկանար 63 անձէ։

Ժողովներուն ներկայ էին տեղական մամուլի թղթակիցներ և հանդիսականներ։

Բ. համագումարը ունեցաւ երկու ձևի աշխատանքներ.

ա. Յանձնաժողովներ՝

բ. Հերթական պաշտօնական ժողովներու

Համագումարի կողմէ ընտրուեցան հետևեալ յանձնաժողովներ՝

ա. Մանդատային,

բ. Շրջանային զեկուցումներու,

գ. Ներգաղթի,

դ. Քաղաքական,

ե. Կազմակերպչական և հաշուեյարդար։

ա. Մանդատային յանձնաժողովը հաստատեց բոլոր պատգամաւորներու օրինականութիւնը։

բ. Շրջանային զեկուցումներու յանձնաժողովը պատկերացուց ամբողջ հայ փախստականութեան ներկայ խիստ աննախանձելի և ողբերգական վիճակը։ Ըստ այդ զեկուցման Արևմտահայ փախստականութեան թիւը աւելի քան 300,000 է, որոցմէ 60,000-ը ներկայ խստաշունչ ձմրան մնացեր են բացօթեայ։ Մնացած պատսպարուած մասը մեծ մասամբ կը բնակին աւերակ թուրք և հայ գիւղերու մէջ, աւերակ [illegible]։

Փախստական որբերուն թիւը 30,000 է աւելի է, որոցմէ թեթևակի կը խնամուին միմիայն 3380 շունչ։ Մնացեալները գիւղերու և քաղաքներու ամեն անկիւններ, պատերու տակ կը թափառին և կը մեռնին, [illegible] սովէն և ցուրտէն։ Գոյութիւն ունեցող որբանոցներէն շատ քիչերը բարեկեցիկ են, մեծ մասը որբերուն անսնունդ կը պահեն, վատառողջ, բոբիկ և հիւանդ։

Արևմտահայ փախստականութեան առողջապահական կեանքը խիստ աննախանձելի է։ Հազիւ մէկ քանի կէտերու վրայ գոյութիւն ունին հիւանդանոցներ, մինչդեռ ամեն տեղ տարածուած է բծաւոր տիֆը, սքարլաթին, սկորբիթ և այլ համաճարակ հիւանդութիւններ։ Մահացումը արևմտահայ փախստականութեան մէջ օրը հազարէն աւելի է և միջոցներու բացակայութեան շնորհիւ այդ թիւը օրէ-օր կաճի։

Սննդատու կայանները միայն սուպով կը կերակրեն հազիւ 38,000 հոգի։ Ընդամէն 17 սննդատու կայաններ գոյութիւն ունին, որոնք շուտով մթերքներու բացակայութեան շնորհիւ կը փակուին։

Նպաստի գործը կանոնաւոր չէ։ Ցարդ մէկ քանի տեղեր միայն փախստականութեան դրուած է իւրաքանչիւր շունչին ամիսը 7 ֆ. ցորեն, քիչ մը գարի և երբեմն քանի մը ռուբլի։

Արևմտահայ փախստականութիւնը մեծ մասամբ անգործ է։ Միայն Ամերիկեան Նպաստամատոյցը և վերջերս բացուած պետական ջուլհականոցներուն մէջ կաշխատին մէկ քանի հազար փախստականներ։

Լսելով շրջաններէն եկած արևմտահայ փախստականութեան պատգամաւորներու զեկուցումները, համագումարը եզրակացուց որ ներկայիս, հայ, ինչպէս նաև եզիդի ժողովուրդը փաստօրէն սովի և համաճարակի ճիրաններու մէջ իր վերջնական բնաջնջման նախօրեակը կապրի։ Այդ առթիւ արևմտահայ Բ. համագումարը որոշեց՝

որ համագումարէն ընտրուած մարմինը ազդու դիմումներ կատարէ Դաշնակից պետութեանց Կովկասեան ընդհ. հրամանատարութեան, Դաշնակից պետութեանց, Համաշխարհային Խորհրդաժողովին, ինչպէս նաև Պարիզ կազմուած Հայկ. Կառավարութեան և պահանջէ հաց և շուտափոյթ ամեն օգնութիւն մահացող ժողովրդի համար։ Համագումարը որոշեց յանձնարարել, որ մարմինը անհրաժեշտ միջոցներ ձեռք առնէ նպաստի և խնամատարական գործը կազմակերպելու և լաւ հիմքերու վրայ դնելու։

Գ. Ներգաղթի յանձնաժողովի զեկուցման համաձայն, արևմտահայութեան վաղուան ներգաղթը, ամենէն առաջ պէտք է հիմնապէս ապահովել ռազմական, պարենաւորման և վերաշինութեան տեսակէտներով, նկատի ունենալով, որ որոշ փաստեր կան, թէ անհնազանդ և ապստամբ քրդական որոշ ժասեր, որոնց կ'օժանդակէ նաև Թուրքական կառավարութիւնը, իրենց զինուած գործողութիւններով անհնարին կը դարձնեն արևմտահայ փախստականութեան ներգաղթը. անհրաժեշտ է ամենէն առաջ, որ Դաշնակից զօրքերը գրաւեն Հայաստանի գլխաւոր կէտերը: Հարկաւոր է միանգամայն ապահովել փախստականութեան պարենաւորումը, քանի որ նոյնիսկ ներկայիս անիկա ոչ մէկ հնարաւորութիւն ունի ապրելու. Անհրաժեշտ է հիմնկուանէ իսկ պատրաստել փոխադրական միջոցներ, քանի որ փախստականութեան բոլոր անասունները և սայլերը ոչնչացուած են կամ ծախուած: Անհրաժեշտ է նոյնպէս, երկիր մանելէն առաջ, վերաշինել արևմտահայութեան հայրենիքը, սերմացու, լծկան, երկրագործական գործիքներ և այլ դիւրութիւններ հայթայթելով անոր:

Լսելով ներգաղթի յանձնաժողովի բացատրութիւնները, համագումարը ընդունեց հետևեալ բանաձևը՝

«Նկատի ունենալով որ մօտիկ ապագային արևմտահայ փախստականութեան ներգաղթը նպատակայարմար և արդիւնաւէտ կըլլայ միմիայն այն պահուն, երբ անիկա կը կատարուի որոշ կանոնաւորութեամբ, ժողովրդի ֆիզիքական ապահովութեան անհրաժեշտ պայմաններու մէջ համագումարը կը հրահանգէ իրմէ ընտրուելիք մարմինին այժմէն անհրաժեշտ միջոցներ ձեռք առնել, պատմական Միացեալ Հայաստանի կառավարութեան և Դաշնակից Պետութեան ներգործօն միջամտութեամբ և աջակցութեամբ, պետականօրէն ապահովել ներգաղթող ժողովրդի ֆիզիքական գոյութիւնը և պարենաւորման անհրաժեշտ պայմանները, ինչպէս նաև ատոնց հետևող վերաշինական գործի իրականացման անհրաժեշտ տուեալները հաւաքելու:

—

Դ.—Քաղաքական յանձնաժողովը քննութեան առնելով հայութեան ներկայ քաղաքական վիճակը, ինչպէս նաև հայութեան դարաւոր իղձերն ու իդէալները, տուաւ իր բացատրութիւնները:

Համագումարը քննելով այդ բոլոր բացատրութիւնները և հայութեան ներկայ քաղաքական կացութիւնը, որոշեց՝

Ա.—Սրտագին ողջունել և յայտարարել Ազատ և Միացեալ Հայաստանի անկախութիւնը.

Բ.—Լիակատար վստահութիւն յայտնել Ազատ և Միացեալ Հայաստանի Պօղոս Նուբար փաշայի անդրանիկ դահլիճին.

Գ.—Յայտարարել իր կամքն ու վճռական որոշումը՝ ունենալ քաղաքական և պետական մէկ միութիւն, համազգային հատուածներու և երկրամասերու միութեամբ.

Դ.—Պարտադրել ընտրուած «Գործադիր Մարմինին» նախարարական դահլիճին հետ անմիջական յարաբերութեան մէջ մտնել՝ իրականացնելու և գործնականացնելու քաղաքական և պետական այն բոլոր աշխատանքները, որոնք հարկաւոր են Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութիւնը հիմնաւորելու համար.

Ե.—Միաժամանակ պարտադրել ընտրուած «Գործադիր Մարմին» գործնական քայլեր առնել Հայաստանի հանրապետութեան նախարարութեան և խորհրդարանի հետ Միացեալ Ազատ Հայաստանի անկախութիւնը յայտարարելու և իր մասնակցութիւնը բերելու գոյութիւն ունեցող պետական և օրէնսդրական հաստատութեանց մէջ Համազգային Միութիւնը իրականացնելու համար.

Զ.—Պահանջել Ազատ և Միացեալ Հայաստանի պետական գոյութեան երաշխաւորումը Դաշնակից պետութեանց քաղաքական, տնտեսական և ռազմական օժանդակութեամբ և աջակցութեամբ.

Է.—Պահանջել հայկական մեծ եղեռնի հեղինակ և պատասխանատու ճիւաղներուն՝ Վիլհելմի, Էնվէրի, Թալէաթի, Ջեմալի, Նազըմի, Շէվքեթի և ընկերներու, նահանգապետներու, կառավարիչներու և բոլոր ղեկավարներու զինուորա-դաշտային դատարանով պատժուելը.

Ը.—Պահանջել հայ ժողովրդի վնասներու ամբողջական հատուցումը ի հաշիւ Օսմ. կառավարութեան:

—

Ե.—Կազմակերպչական Յանձնաժողովը ամենէն առաջ քննութեան ենթարկեց նախկին Արևմտահայ Խորհրդի և անոր Գործադիր Մարմնի գործունէութիւնը: Համագումարը անհրաժեշտ լուսաբանութիւններ ստանալէ ետք, տուաւ հետևեալ բանաձևը.

«Արևմտահայ Բ. համագումարը լսելով հաշուեյարդար Յանձնաժողովի զեկուցումը Արևմտահայ Նախկին մարմիններու մասին և նկատելով որ անոնք ներկայիս կազմալոյծ վիճակի մէջ են շնորհիւ այն հանգամանքի, որ 1918 Թուի մայիսէն ի վեր ոչ մէկ տեղ յաջողած են մեծամասնութիւն կազմել, զիրենք ընտրողները հաւաքել և իրենց նիւթական ու բարոյական գործունէութեան հաշիւը ներկայացնել, ինչպէս նաև շնորհիւ այն հանգամանքի, որ ոչ միայն զիրենք ընտրողներու մօտ չեն վերադարձեր և Բ. համագումարին չեն ներկայացեր,—բան մը, որ անոնք հնարաւորութիւն ունէին ընելու,—այլ և միայն երկու-երեք հոգիի համաձայնութեամբ յանձն են առած Արևմտահայ փախստականութեան հանդէպ այնպիսի պարտականութիւններ կատարել, որ երբեք իրենց վրայ դրուած չէ եղեր. անոնց քով գտնուած գումարները անձնական պատասխանատուութեամբ զանազան գործերու յատկացնելով, բան մը, որ ոչ համագումարը, ոչ խորհրդակցութիւնը և ոչ ալ խորհուրդներն են Թոյլատրած:

Արևմտահայ Բ. համագումարը, որպէս Հայաստանի հանրապետութեան սահմաններուն մէջ ապաստանող արևմտահայ փախստականութեան ներկայացուցչութիւնը, կը յայտարարէ՝

Ա.—Նախկին արևմտահայ խորհուրդները լուծուած,

Բ.—Պահանջել բարոյական և նիւթական հաշուետուութիւն՝ իրենց ամբողջ գործունէութեան վերաբերմամբ, թէ հաւաքականօրէն և թէ անձնապէս:

Զ.—Կազմակերպչական Յանձնաժողովի բացատրութիւնները լսելով և նկատի ունենալով խիստ անհրաժեշտութիւնը Արևմտահայ նոր Գործադիր Մարմնի մը գոյութեան, Արևմտահայ Բ. համագումարը որոշեց ընտրել Արևմտահայ Գործադիր Մարմին, որպէս Հայաստանի հանրապետութեան սահմաններուն մէջ ապրող արևմտահայութեան գործերու վարիչ:

Գործադիր Մարմինն ունի հետևեալ իրաւասութիւնները և պարտականութիւնները՝

Ա.—Գործադիր Մարմինը կը կազմուի ինն անձէ:

Բ.—Կիրականացնէ համագումարի որոշումները.

Գ.—Կը շարունակէ մնալ իր ստանձնած պարտականութեանց և իրաւասութեանց մէջ, մինչև Միացեալ Ազատ Հայաստանի պետական-օրէնսդրական ֆունքսիոններու իրագործումը հայութեան միւս հատուածներու, Պօղոս Նուպար փաշայի դահլիճի, Հայաստանի հանրապետութեան կառավարութեան և Խորհրդարանի գործակցութիւնն ու համաձայնութիւնը.

Դ.—Բացառիկ և համազգային արժէք ունեցող ոևէ դէպքի առթիւ, եթէ այդպիսին յետագային երևան գայ, կը հրաւիրէ սոյն համագումարը, իր լրիւ կազմով, Գործադիր Մարմնի մէկ երրորդականի, կամ համագումարի անդամներու կէսէն աւելիի պահանջմամբ.

Ե.—Գործադիր Մարմինը հաշուետու և պատասխանատու է համագումարի առջև, իր գործունէութեան համար.

Զ.—Համագումարի բ. նստաշրջանը կը հրաւիրուի մայիս 1-ին, եթէ մինչև այդ ներգաղթը կատարուած չէ և եթէ հնարաւոր է պատգամաւորներու կէսէն աւելին հաւաքել.

Է.—Գործադիր Մարմնի օրէնսդրական գործունէութիւնը կը սահմանափակուի միայն այն չափով, որ չափով որ չի հակասեր համագումարի որոշումներուն.

Ը.—Գործադիր Մարմինը կաշխատէ միւս շրջաններէն ևս պատգամաւորներ բերել, որոնք ներկայ կազմէն կը բացակային զանազան պատճառներով.

Թ.—Արևմտահայ Բ. համագումարը, ապա ընտրեց Գործադիր Մարմինը, հետևեալներէ՝

1.—Սմբատ Բորոյեան
2.—Տոքթ. Պօնարարթեան
3.—Արմէն Սասունի
4.—Գրիգոր Պուլղարացի
5.—Վարազդատ Տէրոյեան
6.—Ռուբէն Դրամբեան
7.—Վահագն Քրմոյեան
8.—Վաղարշակ Ցոփիկեան
9.—Արսէն Կիլար:

Ժ.—Արևմտահայ Բ. համագումարի միաձայն համաձայնութեամբ ողջոյնի հեռագիրներ ղրկուեցան Ամենայն Հայոց Վեհ. Կաթողիկոսին, համաշխարհային Խաղաղարար Խորհրդաժողովին, Պօղոս Նուպար փաշային, Հայաստանի Հանրապետական Կառավարութեան և Խորհրդարանին, զօրավար Անդրանիկին և Ամերիկեան Նպաստամատոյց Կոմիտէին:

«Ժողովրդի Ձայն»-ի խմբագրութիւնը շնորհակալութեամբ ընդունում է ձրի կամ վարձատրութեամբ Բագուի, Ռուսաստանի, Հիւսիսային Կովկասի և Արտասահմանի թերթեր:

## ՎՐԱՑ ԹԵՐԹԵՐԻՑ

«Սախալխօ Սաքմէ»-ն (№ 472) Թիֆլիսի քաղաքային ինքնավարութեան գործերի առթիւ, իր հերթական առաջնորդողում, ի միջի այլոց, գրում է հետևեալը.

«Այս տարի սպասւում է շատ մեծ դեֆիցիտ: Այդ դեֆիցիտը ծածկելու համար պէտք կլինի արտաքոյ կարգի միջոցների դիմել: Այդ տեսակ միջոցներից մէկն էլ քաղաքային պաշտօնեաների թւի կըրճատումն է, որոնցից շատերը միայն բեռն են կազմում քաղաքային գանձարանի համար. պէտք է ազատել գանձարանը այդ տեսակ պաշտօնեաներից, իբրև պենսիօներներից: Կան և ուրիշ տեսակ քաղաքային պաշտօնեաներ, որոնք չեն կանգնած իրենց կոչման բարձրութեան վրայ: Օրինակ՝ քաղաքային հիւանդանոցների ծառայողները, որոնց է յանձնուած տարափոխիկ հիւանդների հոգատարութիւնը: Նրանք ուլտիմատում ուղարկեցին քաղաքային վարչութեան և սպառնացին, որ եթէ իրենց պահանջներին բաւարարութիւն չեն տալ, հիւանդներին խնամելը կը թողնեն: Քաղաքային ինքնավարութիւնը քննութեան առաւ նրանց պահանջները և որքան գանձարանը թոյլ էր տալիս՝ ռոճիկները աւելացրեց: Սակայն վերոյիշեալ ծառայողները սրանով չբաւականացան և լրագրների միջոցով այնպիսի յայտարարութիւններով դիմեցին հասարակութեան, որ ամեն մի գիտակից քաղաքացու մէջ զզուանք միայն կարող է առաջացնել: Նրանք ցոյց տուին թէ ինչ գաղափար ունեն իրենց պարտաւորութիւնների մասին, թէ որքան տարուած են խաւարական զգացմունքներով. մի բացայայտ սպեկուլեացիա է, հիմնուած սուր դրութեան վրայ—ահա այն անձանց պատկերը, որոնք հրաւիրուած են տարափոխիկ հիւանդութիւնների դէմ մաքառելու.

Այս տեսակ մարդկանց հետ, երևի, քաղաքային ինքնավարութիւնը մեծ կռիւ կը մղէ, սակայն վերանորոգուած ինքնավարութիւնը չպիտի վախենայ այս կռուից: Դեմոկրատիայի շահերը աւելի բարձր են քան մասնաւոր անձանց մի խմբի շահերը, և այս խորին գիտակցութեամբ ինքնավարութիւնը ձեռնամուխ պիտի լինի քաղաքային տնտեսութեան բարւոքման և կարգաւորման գործին—վերջացնում է թերթը»:

—

«Էրթօբա»-ն (№ 51) հայ-վրացական կոնֆերենցիայի առթիւ գրում է հետևեալը.

«Պատերազմից յետոյ նորից հաւաքուեցան և բանակցութիւնների մէջ մտան վիճելի հարցերին վերաբերեալ:

Այն, ինչ որ պիտի լինէր պատերազմից առաջ, լինում է արիւնհեղութիւնից յետոյ, ինչ որ առաջ պիտի չլինէր, որպէսզի անարատ արիւնը չթափուէր, այն հիմա է ըսկսւում:

Ձենք ուզում այսօր այդ անմըտութեան վրայ մատնացոյց լինել: Պատերազմից յետոյ եթէ համաձայնութիւն կայանայ, եթէ Բորչալուի գաւառում թափած արիւնը ի զուր չի կորչելու և իբրև հիմք կը ծառայէ եղբայրութեան հաստատման նորանոր պատերազմների առաջացման փոխարէն, այս էլ շատ օգտակար գործ կը լինէր:

Եւ այս նպատակի համար մեծ յուսալի նշաններ ենք տեսնում կոնֆերենցիայի առաջին օրերից պարապմունքների մէջ:

Այստեղ կարծես թէ ստեղծւում է մի ընդհանուր լեզու երկու հանրապետութեան մէջ: Մենք չենք ուզում այս անգամ կանգ առնել կոնֆերենցիայի վիճելի հարցերի վրայ, կասենք միայն, որ գլխաւոր գործն է—սահմաններին վերաբերեալ համաձայնութիւն կայացնելը: Մնացած հարցերը աննշան են: Միայն ուղղակի այս գլխաւոր հարցի մէջ է երևան գալիս երկու հանրապետութիւնների գլխաւոր ուղղութիւնը՝ փոխադարձ օգնութիւն և ընդհանուր ճանապարհով գնալը, թէ փոխադարձ երկպառակութիւնը և փոխադարձ կործանումը: Ահա այս հարցն է վճռուելու սահմանավէճի հետ միասին:

Սակայն չի կարելի այստեղ մատնացոյց չանել մի հանգամանքի վրայ. մինչև այսօր Անդրկովկասեան հանրապետութիւնների գործը փչացնում էր ոչ թէ ներքին յարաբերութիւնները, այլ դրսի ոյժերի վրայ կռթնելը:

Այս կռթնումն պատճառ էր դառնում հանրապետութիւնների գոյութեան դէմ մղած կռուի: Ռուսական, տաճկական և այլ օրիէնտացիան հիմն էր ծառայում հանրապետութիւնների ոչնչացման և նրանց այս արտաքին ոյժի տիրապետութեան:

Մենք մտաբերում ենք մի քանի ղեկավար շրջանների պատասխանատու յայտարարութիւնները՝ կամ մենք, կամ նրանք. այս նշանակում էր մշտական պատերազմ կամ ուրիշի պատառ դառնալը: Եւ այս յայտարարութեան վրայ աւելանում է և երկրորդ բանաձևը: Թող ուրիշը մեզ կործանէ, միայն թէ հարևաններին էլ հետը կլանէ: Մի խօսքով՝ ես ոչնչացայ, քեզ էլ ոչնչացրի—երգում էին ումանք հանրապետութեան ղեկավարներից:

Եւ ահա այս քաղաքականութեան վերջ պիտի դնի կոնֆերենցիան: Այս քաղաքականութիւնը հիմովին պիտի փոխէ կոնֆերենցիան և հանրապետութիւնների փոխադարձ օգնութիւնը պիտի դառնայ մեր զօրութեան և անկախութեան գլխաւոր սիւնը:

Պէտք է ասենք, ոչ Եւրոպան, ոչ առանձին տէրութիւնները չեն վճռելու մեր ներքին փոխադարձ յարաբերութեան հարցը այնպէս, որ անբաւականութեան պատճառը մէջ տեղից վերանայ՝ Ընդհակառակն, այս կարող է անել միայն հանրապետութիւնների բարի տրամադրութիւնը և բանակցութիւնը: Եւրոպան միայն կը հաստատէ այն, ինչ որ այստեղ փաստօրէն և իրաւաբանօրէն ձևակերպուած կը տեսնէ: Հակառակ դիպուածում վճռահատ դերը բոլորովին կանցնէ եւրոպական պետութիւնների շահերի սահմանը և մեր ժողովրդի շահերը կը մնան դուրսը:

Ահա սրա վրայ պիտի դարձնեն իրենց ուշադրութիւնը Անդրկովկասեան հանրապետութիւնների պատասխանատու շրջանները:

Կամ մենք ինքներս մեզ պիտի կառավարենք, միմեանց հետ փոխադարձաբար հաշտուելով, կամ ուրիշի պատառ պիտի դառնանք:

Այսպէս է դիլեման, և միթէ այստեղ կարող է լինել երկուութիւն և երկու միտք»:

## ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ

### ԻՆՉՊԷՍ ՏԱՐԱԾԵԼ ՄԵԶԱՆՈՒՄ ՄԵՂՈՒԱԲՈՒԾՈՒԹԻՒՆԸ

Դեռ ևս մեզանում մեղուաբուծութիւնն այնպէս մեծ ծաւալ չէ ստացել, ինչպէս առհասարակ եւրոպական ու ամերիկական երկրներում. բացի այս մեղուաբուծութեամբ պարապողները, բացառութեամբ մի քանիսների, վարում են իրենց գործը խիստ սահմանափակ, անբաւարար ու միևնոյն ժամանակ նահապետական ձևով, գիտական նորագոյն գործնական տուեալներին բոլորովին անհամապատասխան:

Հենց այս է գլխաւոր պատճառը, որ մեզանում, ինչպէս և լայնատարած Ռուսաստանում, բնակչութեան մեծ մասը զուրկ է իր առօրեայ պէտքերի համար բաւարար քանակով մեղր ունենալու հնարաւորութիւնից: Հաւանական է նոյնիսկ, որ հայ գիւղացիներից շատ շատերը գուցէ լսած և պատահաբար տեսած, բայց երբէք ճաշակած լինեն այս օգտակար ու առողջարար սնունդը: Այն ինչ Անդրկովկասեան ամբողջ ազգաբնակութիւնը պիտի կարենար առատօրէն վայելել այս բնականպէս առողջարար սնունդը հենց իր ձեռքով արդիւնաբերած, եթէ մեղուաբուծութիւնն այնպէս լայն ծաւալով ու գիտական նորագոյն տուեալներով տարածուած լինէր նաև մեզանում:

Դժբախտօրէն մեզանում մեղուաբուծութիւնը դեռ ևս իր արժանաւոր գնահատումն չէ ստացել, իր զարգացման բարձր աստիճանին չէ հասել բազմազան աննպաստ հանգամանքների շնորհիւ և, որ ամենագլխաւորն է, ազգաբնակչութեան գլխովին անգիտութեան պատճառով:

Այնինչ ամբողջ Կովկասն ու մասնաւորապէս Անդրկովկասն իրենց երկնամերձ անտառախիտ լեռներով, ծաղկազարդ դաշտերով, ալպեան բուրալից արօտներով ու բազմերանգ մեղրատու նեկտարածոր հովիտներով բոլոր նըպաստիչ յարմարութիւններն են ընձեռնում առատօրէն մեղուաբուծական դիւրին գործին:

Ներկայ յօդուածիս նպատակից դուրս է արգոյ ընթերցողների հետ գիւղատնտեսական այս շատ արդիւնաբեր ու միևնոյն ժամանակ վերին աստիճանի դիւրին և շատ շահաբեր ճիւղի, այն է՝ մեղուաբուծութեան մասին խօսել: Թողնում եմ առայժմ. այս գուցէ մօտաւոր ապագայում յարմարութիւն կունենամ ինչպէս մեղուաբուծութեանը մի յատուկ յօդուած նուիրել:

Ներկայումս աւելի կարևոր եմ համարում արգոյ ընթերցողների ուշադրութիւնը դարձնել այն նպաստաւոր հանգամանքների և մատչելի միջոցներից մի քանիսի վրայ, որոնց օգնութեամբ կարելի է մեզանում լայն ծաւալով տարածել մեղուաբուծութեամբ պարապելու գործը:

Ահա յիշեալ նպատակով էլ օգտւում եմ 1917 Թուականին, Տամբովի նահանգում ի գործ դրուած Ռ. Ս. Սինոդին կից դպրոցական խորհուրդի պարտադիր որոշումներից, որ կայանում է հետևեալում.

Ունենալ բոլոր եկեղեցական-ուսուցչական, երկդասեան և այլն, որոշ ժամանակից յետոյ, նաև մէկ դասարանեան դպրոցներում բաւարար Թւով փեթակներ ու գործին հմուտ հրահանգիչներ դպրոցի սաներին մեղուաբուծութիւնը գործնապէս սովորեցնելու նպատակով:

Բացի այս վերոյիշեալ յոյժ համակրելի գաղափարից՝ Ռ. Ս. Սինոդին կից ուսումնարանական խորհուրդը դիմել է Տամբովի նահանգում արդէն գոյութիւն ունեցող եկեղեցական-ուսուցչական, երկդասարանեան ծխական բոլոր դպրոցների հոգաբարձա-մանկավարժական խորհուրդներին մի անկետայով մէջը նշանակուած հարցերին շուտափոյթ պատասխանի պահանջմամբ:

Ահա և հարցերը.

ա. Ցանկալի չէ՞ արդեօք հիմնել Թեմական մեղուանոց հոգևոր իշխանութեան հսկողութեան ենթակայ, որը կարենայ [illegible] մատակարարել ուսումնարաններին պահանջին համեմատ:

բ. Ո՞րտեղ և ինչքան մեղուանոց-փեթականոց պէտք է ունենայ Թեմը:

գ. Ցանկալի՞ է արդեօք կազմակերպել Թեմական գործարան-արհեստանոց, որը պարտաւորուած լինի դպրոցներին մատակարարել մեղուաբուծութեանը վերաբերեալ բոլոր անհրաժեշտ գործիքներ, պարագաներ, նաև փեթակներ՝ չափաւոր, մատչելի գներով:

դ. Ցանկալի չէ՞ր լինի արդեօք հիմնել մեղուաբուծական ընկերութիւն, որին անդամակցեն պարտադրաբար տեղի հոգևոր կոչումով բոլոր պաշտօնեաները, դասատուները, ընդունել նաև այլ ցանկացողներին:

Ինչպիսի համակրանք և ընդունելութիւն գտաւ Ռ. Ս. Սինոդին կից ուսումնարանական խորհրդի յիշեալ համակրելի գաղափար-առաջարկը հասարակական լայն խաւերում—անյայտ է տակաւին. ենթադրելի է սակայն, որ արդէն որոշ չափով իրագործուել, կեանքի մէջ է մտել:

Այս բոլորից վերջը Թւում է թէ հայ հոգևորականութիւնն ևս ձեռնհաս է նոյնանման գաղափարներ իրագործել, կեանքի մէջ մտցնել: Այս ուղղութեամբ կարող են գործել մեր ծխական և Թեմական երկսեռ դպրոցների հոգաբարձական ու մանկավարժական խորհուրդները ամենայն աջողութեամբ, առանց որևէ խոչընդոտի կամ արգելքի:

Չէ որ այլ ևս կարիք չկայ որևէ ոստիկանապետի կամ ժանդարմական գլխաւորի բարեհաճ Թոյլտուութիւնը մուրալու և երկար սրտամաշ սպասումներից յետոյ զզուելի մերժումն ստանալու:

Բաց ու լայնածաւալ է ազատ գործունէութեան հասարակական ասպարէզը. հենց այժմ է իսկական ժամն ու ժամանակը գործելու:

Մկրտ. Նաւասարդեան

ԽՄԲԱԳՐԱԿԱՆ ԿՈԼԼԷԳԻԱ
Հրատարակիչ՝ Հայ Ժողովրդական Կուսակցութիւն

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Առանձին ուշադրութեան հասակաւորների, կանանց եւ օրիորդների, որոնք փնտրում են մաքուր, ինտելիգենտ պաշտօններ

ՀԱՇՈՒԱՊԱՀՈՒԹԻՒՆ

հայերէն և ռուսերէն լեզուով (ըստ ցանկութեան) ամենակարճ ժամանակում կարող են սովորել ամենքը, շատ կամ քիչ կարդալ-գրել իմացողները եւ մտնել ծառայութեան հաշուապահի, կոնտորշչիկի, գանձապահի, նամակագրի, գործակալի և այլ պաշտօնով: Կուրսը վերջացնողներին տրւում են ատեստատներ: Պարապմունքները խմբովին և առանձին: Վճարը՝ ով ինչքան կարող է: Ընդունելութիւնը մինչև փետրուարի վերջը ամեն օր առաւ. ժ. 10—12 և երեկ. ժ. 4—7: Դիմել հաշուապահական և առևտրական կուրսեր՝ Մ. Ա. Կիրակոսեանի: Հասցէն՝ Зарядный переул., № 3, За Кононирскимъ переулкомъ, позади главнаго телеграфа, на Головинскомъ проспектѣ. 10—5

„ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆ"-Ի

գրասենեակում վաճառւում է նոր հրատարակութեամբ լոյս տեսած

ԳԷՈՐԳ ԹՈՒՄԱՆԵԱՆԻ

■ ■ ՁԵՄՍՏԻՈՆ ■ ■

ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ և ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

ԳԻՐՔԸ

Գինը 50 կոպեկ:
Դիմել գրասենեակ՝ Головинскій пр. № 25. 0—25

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ
ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ՈՒ ՀԱՇՈՒԱՊԱՀԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

Հայերի մէջ առևտրական կրթութիւն տարածող Կովկասեան ընկերութեան:

Նիկոլայեւսկի № 36:
0—56 Տեսուչ՝ Գ. Կ. Տէր-Դաւթեան

Տպարան «Մամուլ»—կառավ. Մ. Եփրիկեան և Ց. Մայիլեան, Լօրիս-Մելիքեան փող., № 22.